



MasterCard® SecureCode™՝ ապահով առցանց վճարումներ և գնումներ

**MasterCard®
SecureCode™**

MasterCard® SecureCode™-ը նշակվել է MasterCard® ընկերության կողմից՝ որպես համակարգ, որն ավելի անվտանգ է դարձնում Ձեր գնումներն ու վճարումներն ինտերնետի միջոցով: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ ՄաստերՔարտ քարտատերերը ինտերնետով գնումներ և վճարումներ կատարելիս պետք է հաստատեն իրենց գործարքը SMS հաղորդագրության միջոցով ստացված ծածկագրով (կիրառելի չէ ԱրՔա համակարգում գրանցված վիրտուալ քարտով կատարված գործարքների համար):

Ինչ է իրենից ներկայացնում MasterCard® SecureCode™ համակարգը

SecureCode™-ը համակարգը հասանելի է միայն այն քարտերի համար, որոնք թողարկված են MasterCard® SecureCode™-ին անդամակցող բանկի կողմից: Քարտատերը պետք է գրանցված լինի SMS ծանուցումների ծառայությանը քարտը թողարկող բանկում: Ի հավելումն, ինտերնետային կայքը, որի միջոցով կատարվում է գործարքը, նույնպես պետք է գրանցված լինի MasterCard® SecureCode™ համակարգում: Այն կայքերը, որոնք գրանցված են նշված համակարգում, իրենց վճարման էջում ունեն MasterCard® SecureCode™ ապրանքանիշը, այսինքն՝ նախքան Ձեր քարտի համարը և այլ մանրամասները մուտք անելը, Դուք տեղեկացված կլինեք կայքի անվտանգության մակարդակի վերաբերյալ:

Այսպիսով, անվտանգության այս համակարգին մասնակցում են -«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ բոլոր այն քարտատերերը, ովքեր գրանցված են SMS ծանուցումների ծառայությանը: Եթե Դուք հանդիսանում եք Բանկի ՄաստերՔարտ քարտատեր, կատարում եք գնումներ և վճարումներ ինտերնետում, սակայն գրանցված չեք SMS ծանուցումների ծառայությանը, Դուք չեք կարող կատարել վճարում MasterCard® SecureCode™ համակարգ ունեցող կայքերում: Գրանցվելու համար անհրաժեշտ է մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ: Գրանցումն անվճար է և տևում է մի քանի րոպե:

Ինչպես է աշխատում MasterCard® SecureCode™-ը

MasterCard® SecureCode™-ի աշխատանքի սկզբունքը հետևյալն է. ինտերնետային կայքում Ձեր էյչ-Էս-Բի-Սի Բանկի ՄաստերՔարտ քարտով առցանց վճարում կատարելիս, անհրաժեշտ է մուտքագրել Ձեր քարտի պահանջվող տվյալները, որից հետո համակարգը Ձեզ կուղղորդի դեպի նոր էջ, որտեղ նշված կլինի Ձեր բջջային հեռախոսահամարը, որին պետք է ուղարկվի գործարքի հաստատման ծածկագիրը: Հաստատելով հեռախոսահամարը՝ Դուք կստանաք ծածկագիրը և կմուտքագրեք այն պահանջվող դաշտում: Վավեր ծածկագիր մուտքագրելու դեպքում գործարքը կկատարվի: Սխալ ծածկագիր մուտքագրելու դեպքում գործարքը կմերժվի:

Եթե Դուք գրանցված չեք SMS ծանուցումների ծառայությանը, ապա Ձեր էյչ-Էս-Բի-Սի Բանկի ՄաստերՔարտ քարտի համար SecureCode™-ը հասանելի չի լինի, և հետևաբար այն կայքերը որոնք գրանցված են MasterCard® SecureCode™ համակարգով չեն կարողանա սպասարկել Ձեր քարտերը:

Եթե դեռ գրանցված չեք SMS ծանուցման ծառայությանը, հորդորում ենք Ձեզ մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ և գրանցվել:

Հաճախակի տրվող հարցեր

- 1. Անհրաժեշտ է արդյոք դիմել նոր քարտի, MasterCard® SecureCode™ համակարգից օգտվելու համար:**

Ոչ, նոր քարտի դիմելու անհրաժեշտություն չկա: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ կողմից տրամադրված բոլոր ՄաստերՔարտ քարտերը ավտոմատ կերպով ընդգրկվում են համակարգում: Նույնիսկ կարիք չկա տարբեր ինտերնետային կայքերում (PayPal, Amazon, և այլն) վերագրանցել Ձեր քարտը՝ տվյալ կայքերում SecureCode™ անվտանգության հնարավորությունից օգտվելու համար:
- 2. Արդյո՞ք MasterCard® SecureCode™- համակարգը հասանելի է հավելյալ քարտատիրոջը նույնպես:**

Այո, MasterCard® SecureCode™ համակարգում գրանցվում են բոլոր այն քարտերը, որոնց համար քարտատերը գրանցվել է SMS ծանուցման ծառայությանը:
- 3. Ինչպե՞ս է աշխատում հավելյալ անվտանգությունը:**

Ինտերնետային կայքում Ձեր Էյչ-Էս-Բի-Սի Բանկի ՄաստերՔարտ քարտով առցանց վճարում կատարելիս, անհրաժեշտ է մուտքագրել Ձեր քարտի պահանջվող տվյալները, որից հետո համակարգը Ձեզ կուղղորդի դեպի նոր էջ, որտեղ նշված կլինի Ձեր բջջային հեռախոսահամարը, որին պետք է ուղարկվի գործարքի հաստատման ծածկագիրը: Հաստատելով հեռախոսահամարը՝ Դուք կստանաք ծածկագիրը և կմուտքագրեք այն պահանջվող դաշտում: Վավեր ծածկագիր մուտքագրելու դեպքում գործարքը կկատարվի: Սխալ ծածկագիր մուտքագրելու դեպքում գործարքը կմերժվի:
- 4. Արդյո՞ք, MasterCard® SecureCode™-ը հասանելի է բոլոր ինտերնետային կայքերում:**

Ոչ, նույնիսկ եթե Դուք գրանցված եք SMS ծառայությանը, MasterCard® SecureCode™ համակարգից կարող եք օգտվել միայն այն կայքերում, որոնք նույնպես գրանցված են անվտանգության համակարգում: Այն կայքերը, որոնք գրանցված են նշված համակարգում, իրենց վճարման էջում ունեն MasterCard® SecureCode™ ապրանքանիշը, այսինքն՝ նախքան Ձեր քարտի համարը և այլ մանրամասները մուտք անելը, Դուք տեղեկացված կլինեք կայքի անվտանգության մակարդակի վերաբերյալ:
- 5. Կիրառե՞լի է արդյոք MasterCard® SecureCode™ -ը ԱրՔա պորտալում վիրտուալ քարտով կատարված գործարքների համար:**

Ոչ, ԱրՔա համակարգում Ձեր վիրտուալ քարտով կատարված գործարքների համար MasterCard® SecureCode™ -ի մուտքագրում չի պահանջվի:
- 6. Ինչպե՞ս կարող եմ իմանալ արդյոք իմ Էյչ-Էս-Բի-Սի ՄաստերՔարտը գրանցված է համակարգում թե ոչ:**

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից թողարկված բոլոր քարտերը ընդգրկված են MasterCard® SecureCode™ համակարգում, սակայն եթե Դուք անձամբ գրանցված չեք SMS ծանուցումների ծառայությանը, ապա նշված առավելությունից չեք կարող օգտվել: Խնդրում ենք զանգահարել մեր Հեռախոսային կենտրոն +374 60 655 000 հեռախոսահամարով Ձեր քարտի վերաբերյալ մանրամասների համար:
- 7. Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկել, եթե փոփոխվել է իմ բջջային հեռախոսահամարը, քարտի տեսակը կամ այլ անձնական տվյալներ:**

Եթե փոխվել է Ձեր բջջային հեռախոսահամարը, ապա անհրաժեշտ է այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին: Այլ տվյալների փոփոխության դեպքում, ինչպիսիք են

քարտի տեսակը, քարտի համարը, հասցեն և այլն Բանկին տեղեկացնելու կամ այլ քայլեր ձեռնարկելու կարիք չկա:

8. Ենթադրում է արդյոք MasterCard® SecureCode™ համակարգին միանալը, առցանց գործարքների իրականացման գործընթացի փոփոխություն:

MasterCard® SecureCode™ համակարգում ընդգրկված լինելը որևէ կերպ չի ազդում գործարքի կատարման ժամանակի կամ մեխանիզմի վրա:

9. Ինչպե՞ս կաշխատի MasterCard® SecureCode™ , եթե ես ճանապարհորդում եմ և իմ բջջային հեռախոսահամարը հասանելի չէ ռոմինգ տիրույթում:

Քանի որ MasterCard® SecureCode™ -ը կոչված է առավել անվտանգ դարձնելու Ձեր առցանց գնումները, մենք խորհուրդ ենք տալիս Ձեր բջջային հեռախոսահամարը հասանելի պահել, այլապես Դուք չեք կարող ստանալ գործարքի հաստատման ծածկագիր և գործարքը չի իրականացվի: Դուք մեկնելուց առաջ կարող եք Բանկին տրամադրել արտերկրում սպասարկվող վավեր բջջային հեռախոսահամար, հաղորդագրությունը տվյալ հեռախոսահամարին ուղարկելու համար:

10. Կարո՞ղ եմ իմ ցանկությամբ չօգտվել MasterCard® SecureCode™ համակարգից, նույնիսկ եթե գրանցված եմ SMS ծանուցումների համակարգին և ցանկանում եմ ստանալ ելքային և մուտքային գործարքներս հաստատող SMS ծանուցումներ:

Ոչ, հնարավոր չէ հրաժարվել MasterCard® SecureCode™ համակարգից, եթե արդեն գրանցված եք SMS ծանուցման ծառայությանը:

Թարմացվել է՝ 17/01/2019 15:00